ՀՀ Զինվորական դատախազ
Ա. Հարությունյանին
Դիմող՝ թիվ 90955212 քրեական քրեական գործով
տուժողի իրավահաջորդ
Մերուժան Կալեյանի Ներկայացուցիչ
Արթուր Սաքունց
Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

ԴԻՄՈՒՄ

30.07.2013թ. հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշում ստանալու պահանջի մասին

2013թ. հուլիսի 30-ին թիվ 90955212 քրեական քրեական գործի շրջանակներում հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ զինվորական և ՀՀ գլխավոր դատախազություններ:

Հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու օրվանից մինչ օրս անցել է մոտ 8 ամիս, սակայն հաղորդման վերաբերյալ քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում չեմ ստացել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածն ամրագրում է, որ «Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) քրեական գործ հարուցելու մասին, 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին, 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին»: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը կարգավորում է նաև հաղորդման վերաբերյալ որոշում կայացնելու և տեղեկատվության տրամադրման կարգն այն դեպքում, երբ մերժվում է քրեական գործի հարուցումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին»:

Սույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին»:

Վերը շարադրվածից բխում է, որ թե՛ քրեական գործ հարուցելու, և թե՛ քրեական գործի հարուցումը մերժելու դեպքում օրենսդիրը պարտադիր է համարել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կողմից համապատասխան որոշման կայացումը և դրա պատճենը հաղորդում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձին տրամադրելը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 181,182, 185-րդ հոդվածները՝

խնդրում եմ

տրամադրել 30.07.2013թ. ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշումը:

Կից ներկայացվում է 30.07.2013թ. հանցագործության մասին հաղորդման պատճենը:

Դիմող՝ Ա. Սաքունց
15.04.2014թ.

ՀՀ Զինվորական դատախազ
Գ. Կոստանյանին

Պատճենը՝ ՀՀ գլխավոր դատախազ
Ա. Հովսեփյանին

Դիմող՝ թիվ 90955212 քրեական քրեական գործով
տուժողի իրավահաջորդ
Մերուժան Կալեյանի Ներկայացուցիչ
Արթուր Սաքունց
Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն Հովսեփյան

2012 թվականի սեպտեմբերի 6-ին ժամը 12:10 սահմաններում թիվ 35383 զորամասի հրաձգարանում հրաձգություն կատարելու ժամանակ նույն զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի, 15-րդ վաշտի ժամկետային զինծառայող, շարքային Հայկ Մերուժանի Կալեյանը ինքնասպանություն կատարելու նպատակով «ԿԳ» տեսակի «ՎՊ-647» համարի գնդացրով կրակոց է արձակել իր որովայնի շրջանում և տեղափոխվել Մարտունու զինհոսպիտալ, որտեղ ստացված մարմնական վնասվածքներից ժամը 13:10-ի սահմաններում մահացել է:

Փաստի առթիվ 06.09.2012 թ. ՀՀ ՊՆ առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է թիվ 90955212 քրեական գործը՝ ՀՀ քր.օր-ի 110-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Սույն քրեական գործով տուժողի իրավահաջորդ է ճանաչվել Մերուժան Կալեյանը, ում շահերը դատարանում ներկայացնում եմ ես՝ Արթուր Սաքունցս:

2013 թվականի մայիսի 2-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

2013 թվականի հուլիսի 3-ին ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Ստեփանակերտի նստավայրում թիվ ՍԴ/0099/01/13 գործով նշանակված դատական նիստի ժամանակ գործով վկա Արման Վալերիկի Բոզոյանը ասել է, որ ինքը և գործով վկաներ Գեղամ Սիրադեղյանը, Սարգիս Ավալյանը և Դերենիկ Սանամօղյանը 10 օրից ավել գտնվել են Ռազմական ոստիկանությունում, ենթարկվել են ծեծի, բռնության և նրանց ստիպել են, որպեսզի իրենց ցուցմունքներում գրեն այն, ինչ քննիչը կթելադրի:

2013 թ. հուլիսի 23-ին նույն գործով նշանակված դատական նիստի ժամանակ գործով վկա Վոլոդյա Նորայրի Խաչատրյանը հայտնել է, որ ինքը 2012 թվականի սեպտեմբերի 6-ից մինչև նոյեմբերի 7-ը գտնվել է Ռազմական ոստիկանությունում: Նա հայտնել է, նաև որ ինքը մենակ չի գտնվել անազատության մեջ և իր հետ գործով այլ վկաներ էլ են եղել:

Բացի այդ նույն օրը նշանակված դատական նիստի ժամանակ գործով վկա Գևորգ Ղազարյանը հայտնել է, որ չնայած իրեն երկար չեն պահել ոստիկանությունում, սակայն սկզբից իրեն տարել են Մարտունի, այնուհետև Ստեփանակերտ (ենթադրում է, որ իրեն տարել են Ստեփանակերտի Ռազմական ոստիկանություն): Նա հայտնել է, որ այնտեղ հարցաքննության ժամանակ ենթարկվել է բռնության, ծեծի և իրենից պահանջել են , որ գրի այն ինչ քննիչը կթելադրի (այսինքն ենթասպան հայհոյել է կոնկրետ Հայկ Կալեյանին): Գևորգ Ղազարյանը հայտնել է, որ իրեն ծեծել են սև համազգեստով մարդիկ: Դատական նիստի ժամանակ Գ. Ղազարյանը ասել է, որ սկզբում վախեցել է ճիշտն ասել, սակայն հիմա չի վախենում և ասում է այն, ինչ կատարվել է:

ՀՀ Սահմանդրության 16-րդ հոդվածն ամրագրում է անձի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Մասնավորապես՝ «Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով...: Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:

Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

Կալանավորելը, կալանքի տակ պահել, բժշկական կամ դասիարակչական հաստատություններում անձին հարկադրաբար տեղավորելը թույլատրվում է միայն դատարանիր որոշմամբ: Մինչև դատարանի համապատասխան որոշումը ստանալը, անձը չի կարող ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվել *72 ժամից ավելի:*

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության աշխատակցի կողմից մարդուն խոշտանգումների, դաժան կամ նրաարժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը կամ նրա նկատմամբ բռնություն կիրառելն արգելվում է եւ առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության կամ պատժի»: Նույն կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր մարդ ազատության եւ անձի անձեռնմխելիության իրավունք ունի: Ոչ ոք չի կարող ազատությունից զրկվել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով:

Այսպիսով, վերը նշվածից հետևում է, որ ազատությունից զրկումը պետք է լինի օրենքով սահմանված կարգով: Սույն գործով վկաները ռազմական ոստիկանությունում պահվել են անազատության մեջ՝ օրենքի սահմանած կարգի խախտումով:

Ելնելով վերոշարադրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-177, 181-183-րդ հոդվածների դրույթները,

Խնդրում եմ

Ձեռնարկել համապատասխան միջոցները սույն հաղորդմամբ ներկայացված հանցագործությունը բացահայտելու, քրեական գործ հարուցելու, հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Միաժամանակ, խնդրում եմ արդյունքների մասին հայտնել դիմումատուիս:

Դիմող՝ Ա. Սաքունց
30.07.2013թ.